



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/107/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

9 ապրիլի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Լիլիթ Ալեքսանյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարությանի 2025 թվականի ապրիլի 9-ին քննելով Երևան համայնքի ավագանու անդամ Տիգրան Գագիկի Պետրոսյանի կողմից պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/107/2025 վարչական գործը.

ՊԱՐԶԵՑ

1. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով infocom.am կայքում 2024 թվականի սեպտեմբերի 16-ի «Անհամապատասխանություններ Երևանի ավագանու մի շարք անդամների հայտարարագրերում» վերտառությամբ [հրապարակմամբ](#) հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքները, իրականացրել է Երևան քաղաքի ավագանու անդամ Տիգրան Պետրոսյանի կողմից Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում պարզվել է հետևյալը՝

Տիգրան Պետրոսյանը Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Տաթևիկ Արայի Պետրոսյանի (), անչափահաս զավակներ՝ Մարիա Տիգրանի Պետրոսյանի () և Հայկ Տիգրանի Պետրոսյանի () վերաբերյալ տվյալները:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերոյթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի ապրիլի 1-ին Տիգրան Պետրոսյանին հասցեագրել է թիվ 01/1270-2025 գրությունը, հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Տիգրան Պետրոսյանը ստացել է 2025 թվականի ապրիլի 2-ին՝ դրա մասին հավաստումն ուղարկելով Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

1.3 2025 թվականի ապրիլի 7-ին Տիգրան Պետրոսյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 49/25

արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Տիգրան Պետրոսյանի բացակայությամբ 2025 թվականի ապրիլի 9-ին՝ ժամը՝ 15:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Տիգրան Պետրոսյանի կողմից արձանագրության կազմման ընթացքում ներկայացրել է հետևյալ բովանդակությամբ բացատրություն.

«Ներկայացված հայտարարագիրն իմ առաջին հայտարարագիրն է եղել, համակարգն ունեցել է տեխնիկական խնդիրներ, իմ տեղեկացված լինելու առումով նշեմ, որ քանի որ համակարգը չի հարցրել իմ կնոջ տվյալները, մտածել եմ, որ դրանք հայտարարագրման ենթակա չեն: Հարկ եմ համարում նշել, որ երբ տեղեկացել եմ Հանձնաժողովի աշխատակիցների կողմից, անմիջապես շտկել եմ այն որևէ միտում չի եղել տվյալները չներկայացնելու: Նկատի ունենալով այս հանգամանքները առաջարկում եմ բավարարվել բանավոր զգուշացմամբ: Նաև նշեմ, որ անչափահաս զավակներիս մասով հայտարարագրման ենթակա տվյալներ առկա չեն եղել (հայտարարագրման ենթակա գույք, եկամուտ, ծախսեր, շահեր), նաև ունեմ ևս մեկ անչափահաս զավակ, որի վերաբերյալ տվյալները ևս արձանագրված չեն եղել:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/107/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում հետևյալը՝

3.1 Տիգրան Պետրոսյանը 2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած Երևանի ավագանու հերթական ընտրություններում «Ազգային առաջընթաց» կուսակցության համամասնական ցուցակով ընտրվել է Երևանի ավագանու անդամ և մինչ օրս հանդիսանում է Երևան համայնքի ավագանու անդամ (<https://www.yerevan.am/hy/alderman-staff/>):

3.2 Հանրայի ծառայության մասին օրենքի (այսուհետ՝ Օրենքի) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ շտեմարանի տվյալների համաձայն Տաթևիկ Արայի Պետրոսյանը հանդիսանում է Տիգրան Պետրոսյանի կինը ([REDACTED]), իսկ Մարիա Տիգրանի Պետրոսյանը ([REDACTED]) և Հայկ Տիգրանի Պետրոսյանը ([REDACTED])՝ անչափահաս զավակները:

3.4 Տիգրան Պետրոսյանը Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Տաթևիկ Արայի Պետրոսյանի, անչափահաս զավակներ՝ Մարիա Տիգրանի Պետրոսյանի և Հայկ Տիգրանի Պետրոսյանի վերաբերյալ տվյալները:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) Երևան համայնքի ավագանու անդամների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձն իր հայտարարագրում լրացնում է նաև իր ընտանիքի

անչափահաս անդամների, ինչպես նաև իր խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձի գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ իրեն հայտնի տվյալները և պատասխանատու է դրանց իսկության համար:

4.3 Օրենքի 39-րդ հոդվածի (Հայտարարագրում ներառվող ընդհանուր տվյալները) 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտարարագրում նշվում են հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի անունը, ազգանունը, հայրանունը, կապը հայտարարատու պաշտոնատար անձի հետ, ծննդյան օրը, ամիսը, տարին, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (առկայության դեպքում), քաղաքացիությունը, հասցեն, պաշտոնը (աշխատանքային գործունեությունը)։

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.11 Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն պաշտոնատար անձանց «Անձնական տվյալներ» բաժնում առկա է «Ընտանիքի կազմ» բաժինը, որտեղ պաշտոնատար անձը պարտավոր է լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների տվյալները՝ նշելով նրանց կարգավիճակը: Չափահաս անդամների դեպքում անհրաժեշտ է նաև նշել կոնտակտային տվյալներ: Յուրաքանչյուր հայտարարագրի լրացումից առաջ

հայտարարատու պաշտոնատար անձը վերանայում է «Ընտանիքի կազմ» բաժնի տվյալները՝ ընտանիքի կազմում տեղի ունեցած փոփոխություններին համապատասխան:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ: Սույն դեպքում, Օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ է հետապնդում հանրության համար բացահայտել պաշտոնատար անձի գույքային դրության վերաբերյալ տվյալները, որը, տվյալ դեպքում խաթարվել է Տիգրան Պետրոսյանի կողմից, հայտարարագրման ենթակա համապատասխան տվյալը Հայտարարագրում չներկայացնելու արդյունքում:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել հայտարարատու անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Հայտարարատու անձի ընտանիքի անդամի վերաբերյալ տվյալների հայտարարագրման օրենսդրական նպատակը կայանում է պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակի բացահայտումը, շահերի բախման հնարավոր իրավիճակների կանխարգելումը, **ինչպես նաև վերջինիս գույքային դրության բացահայտումը:**

Սույն գործով Երևան քաղաքի ավագանու անդամ Տիգրան Գազիկի Պետրոսյանը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որպես հայտարարագիր

ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի ապրիլի 29-ին ներկայացված Հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, այն է.

Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Տաթևիկ Արայի Պետրոսյանի (), անչափահաս զավակներ՝ Մարիա Տիգրանի Պետրոսյանի () և Հայկ Տիգրանի Պետրոսյանի () վերաբերյալ տվյալները, որոնք պարտավոր էր հայտարարագրել՝ Օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի և 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն:

Արդյունքում հայտարարագրման համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով Տիգրան Պետրոսյանի կնոջ՝ Տաթևիկ Պետրոսյանի հայտարարագրերը չեն ստեղծվել և նա հնարավորություն չի ունեցել լրացնել իր հայտարարագրերը, ինչի հետևանքով չի հիմնավորվել Տիգրան Պետրոսյանի ընթացիկ տարեկան ծախսը, որը հայտարարագրված եկամուտների հարաբերակցությամբ կազմել է բացասական տվյալ, այն է՝ -1,288,120 ՀՀ դրամ: Մինչդեռ Տաթևիկ Պետրոսյանի կողմից ներկայացված հայտարարագրերի հիման վրա կատարված վերահաշվարկի արդյունքում հայտարարատու անձանց ընթացիկ տարեկան ծախսերը հիմնավորվել են վերջիններիս կողմից հայտարարագրված եկամուտներով, կազմելով՝ 25,062,396 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամների, մասնավորապես կնոջ, վերաբերյալ տվյալների հայտարարագրումն ունի էական նշանակություն հայտարարատու պաշտոնատար անձի գույքային դրության բացահայտման տեսանկյունից: Հայտարարատու պաշտոնատար անձի կողմից իր ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների հայտարարագրումն Օրենքի

ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, գույքային դրության բացահայտման հնարավորությունը, ինչը վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարական շահը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Տիգրան Պետրոսյանը ենթակա է պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի համար:

Անդրադառնալով վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանմանը, համաձայն որի համակարգն ունեցել է տեխնիկական խնդիրներ և չի պահանջել վերջինիս կնոջ վերաբերյալ տվյալները և ինքը մտածել է, որ դրանք հայտարարագրման ենթակա չեն, Հանձնաժողովն արձանագրում է, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների հայտարարագրումը հանդիսանում է Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջ: Միաժամանակ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի N 01-Լ որոշման հավելվածի՝ «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրերի լրացման» ուղեցույցի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն հայտարարատու անձը՝ պարտավոր է Հայտարարագրի «Ընտանիքի կազմ» բաժնում լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների տվյալները՝ նշելով նրանց կարգավիճակը: Յուրաքանչյուր հայտարարագրի լրացումից առաջ հայտարարատու պաշտոնատար անձը վերանայում է «Ընտանիքի կազմ» բաժնի տվյալները՝ ընտանիքի կազմում տեղի ունեցած փոփոխություններին համապատասխան: Նշվածից հետևում է, որ Հայտարարագրում առկա է հայտարարտու անձի ընտանիքի անդամների վերաբերյալ առանձին բաժին, որում նա պարտավոր է լրացնել և պահպանել իր ընտանիքի բոլոր անդամների, այդ թվում կնոջ, վերաբերյալ տվյալները, այսինքն

հայտարարագրերի էլեկտրոնային համակարգը պարունակում է Օրենքով և ուղեցույցով սահմանված ընտանիքի անդամների վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալների մասին դաշտերը, որոնք պետք է լրացվեն Հայտարարագրում նույն կերպ, ինչպես լրացվում և պահպանվում են մյուս բաժիններում հայտարարագրվող տվյալները: Ուստի վարույթի մասնակցի կողմից ներկայացված պարզաբանումն անհիմն է և չի կարող նշանակություն ունենալ վերջինիս կողմից դրսևորած արարքի գնահատման համար:

Միաժամանակ, հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ամփոփելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևան համայնքի ավագանու անդամ Տիգրան Գագիկի Պետրոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Գագիկի Պետրոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Տիգրան Գագիկի Պետրոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ